

- 23 Յետ այսորիկ յորժամ՝ քարտուղարն ընդ տեսան իւրում եմուտ յեկեղեցին և առաջի փրկչական պատկերին երկօքեանն կանգնած էին, տէրն տեսանէր զի պատկերն այն անթարթ նայէր ի քարտուղարն, զոր տեսեալ
- 50 տէրն զարմացաւ և հրամայեաց պատանւոյն յաջմէ իւրմէ կանգնել և ահա տեսանէր զի պատկերն յայն կողմն զերեսս դարձոյց և մեծաւ զգուշութեամբ ի քարտուղարն նայէր:
- Դարձեալ հրամայեաց պատանւոյն ի ձախմէ
- 53 իւրմէ կանգնել և ահա պատկերն միւսանգամ ի յայն կողմն զաշտ իւր դարձոյց և մեծաւ քաղցրութեամբ ի նա հայէր: Յայնժամ տէրն երգմանեցոյց զնա զի պատմեսցէ նմա թէ իւ իւրիք այսպէս հաճոյ եղև Աստուծոյ զի պատկերն ի նա այնպէս քաղցրութեամբ հայէր:
- Պատասխանի ետ թէ Աշխշ բարի մասն ունիմ: միայն զայն զի ոչ կամեցայ զՔրիստոս ուրանալ առաջի սատանայի (Ա ձեռ. 63^{ա.բ}):

նու թիւնից տանեալ տարիներ առաջ: Այսպիսով ուրեմն՝ մնում է միակ հնարուորը այն է՝ ենթադրել, որ Հայելին և Առակազիրքը ունին այս պատմութեանց համար ընդհանուր աղբիւր: Թէ և այդ աղբիւրը լինի ոչ անմիջական այլ շատ հեռաւոր:

Գալուստ Տէր Մկրտչեան

15 յունուարի 1900.



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅԻՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ՔԵՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԷՆ ՈՒՍՈՒԱՆԻ)
(Շարունակութիւն) *

2.

ԱՆԳԵՂ ՏՈՒՐԲԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Անգեղ տուն եւ Անգեղեայ:— Ո՛րն է բուն առասպելը Խորենացու մէջ ոչ մի ակնարկութիւն չկայ թէ նա ժողովրդական երգից կամ առասպելից առած լինի Անգեղ

Կիլիկիայում: Սեւսի և Խոռնաւիցի Պետրոս երեցի ՌԿԻ բուն յիշած կարողիկոսը Յովնանեկու Դ Անբապցի կ: Մտնի քարգմանութեամբ դուրս է գալիս որ Պետրոս քահ: Խոռնաւիցիին Վարդանայ առակներ գրել է Ասեղի քարանձաւում: «Я, недостойный священникъ Петръ, много потрудился надъ этою книгою, коюда писалъ въ Аменской пещерѣ: у меня убогаго было много усердія (էջ 105). Ծանոթութեան մէջ էլ աւելացնում է Մուրը, որ Ասեղի քարանձաւը կարող էր գտնուել Ասեղեան կրճատ կամ ձորում (ծն Աменскомъ ущелии), Կուր զեթի հարաւային օժանդակ Ասեղ զեթի վրայ: Եւ թէ Վախուշի վիշապներամբ Ասեղ աւանում այրում էին նաեւ հայեր եւլն: Այս յուրը հիմնուած է յիշատակարանի հետեւեալ խօսքերի վրայ, ձեւ անարժան Պետրոս երեցս յոյժ աշխատեցայ յայտն քառիս որ զրեցի յայրի ասեղիս, քաղանքս շատ էր ալլախիս: Իմ կարծիքով յայրի ասեղիս՝ քաղ հղինի յառակ անուն լիսմարելի և հասկանալու թէ Ասեղի այր: քարանձաւ: այլ յայրի այրիացած ասեղս կամ ասեղիս, այսինքն այրի ծամանակս երբ իրիցիկնը վախճանուած էր»: Խոռնաւիցիին շատ հզօր չէ ուղղագրութեան մէջ և զորով է շուտանկալուոր—ուսումնասէր, ընդերձունն—ընթերցումն, քաղաշարեւ—քաղաշարեւ: Եւլն եւլն, ուսի և կարող էր գրել յայրի—այրի, կամ իրեւ նախդրով յայրի ասեղիս:

* Տե՛ս Արարտ 1900 համար Բ. էր. 86:

Որչափ որ անվիճելի կարելի է համարել, որ այս երկու պատմութեանց հիմնական միտքը նոյնն է Աղուէսազրբի վերեւում նշանակուած առակների հետ մեղ համար նոյնչափ հաստատուն է, որ որևէ անշուքութիւն չկայ այս կետերում Աղուէսազրբի և Հայելու միջև: Բացի ոգու խմբագրական և այլ տարրերութիւններից կայ այն հանգամանքը որ Աղուէսազրբի այդ երկը առակները միմեանց կից մէկը միւսի ետեւից, գտնուում են Մառի Վ ձեռագրում: որ է Պարիզի Աղգային սատանադարանի օրինակը, գրուած ՌԿԴ. — 1615 թուին *, ուրեմն Հայելու հայերէն թարգմա-

* Յիշատակարանի մանրամասնութիւնները ձեւ Մառի երկարորտքեան մէջ I հատ. էջ 104—5. գրիւն է Խոռնաւիցի Պետրոս երեց: Խոռնաւիցիի սեղը յայտնի չէ: Ենթացրում է իննը Կիլիկիայում (ձեւ նոյն սեղը էջ 105 ծանօթ. 2): Մացողն է ուն Արապիան արհի եպիսկոպոս: որ նոյն ՌԿԻ բուն ձեւնադրուել է Յովնանեկու կարողիկոսից. «Երդ ևս Արապիան եպիսկոպոսս զհարց հայրապետութեան ի յանձն առի ի քովին Ռ. ԿԴ. տեսն իմոյ ի սեր Յովնանեկու կարողիկոսեան»:

Այս 1615 բունի կամ մի տասնեակ արտի առաջ կամ յետ այդ բունից՝ էլ միամենի Յովնանեկու կարողիկոս լիայ, ըստ 1601-ին, 1606-ին, 1608-ին յիշում է Յովնանեկու կարողիկոս Սոյ (Յովնանեկու Դ. Անբապցի բոս Աշխանի, ձեւ Սիսուան էջ 218, 260 և յաւելում 546, 540, նաև 8աշեան ցուց. էջ 358, 431, 526, 394, եւլն.) որ կարող էր այրած լինել նաև 1615-ին և թեև յետոյ էջ: 1615-ին կարող էր այս Յովնանեկու կարողիկոսից ձեւնադրուած լինել ևս Արապիան եպիսկոպոսը, որ ևս նոյն բունին գրել տուց մեզ գրադիցնող Առակագիրքը: Ուրեմն ամենայն հաւանականութեամբ այս ամենը սեղի ունեցաւ

տան նախարարութեան¹ անուան ծագումն Անգեղ Տուրքից: Ծա այդ վերջնում է գրաւոր աղբիւրից. «Բայց զԱնգեղ տունն ասէ նոյն պատմագիր [Մար Արաս] ի Պասքամայ ումննէ ի Հայկակայ թոռն է լինելը (Ա. իգ.): Իսկ ապա (Բ. Ը.) Տուրքի մասին խօսելիս կրկնում է նոյնը թէ Տուրքն էր «ի զաւակէ Պասքամայ ի Հայկակայ թոռնէ... որ վասն առաւել ժահագիմութեանն ձայնէին անգեղեայ... Հաստատէ կուսակալ արեւմտից. և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տունն»:

Միւս կողմից ոչ մի ակնարկութիւն չունինք նոյնպէս և այն մասին թէ պատմագիրը երգից վերցրած լինի Տուրքի արտաքին օգեղութեան նկարագիրը, ինչպէս և այդ պատճառով հսկայի Անգեղեայ կոչուիլը: Ետտ հաւանական է, որ իրեն Մորենացու կամ իւր գրաւոր աղբիւրի շինածը լինի այդ Պէտքէ ի նկատի ունենալ, որ մեր պատմագիրը սիրով կանգ է առնում միւս նախարարների անունների բացատրութեան վրայ և այդ բացատրութիւնները, ինչպէս երևում է, ինքն է տալիս «Եւ զարծրունիսդ գիտեմ ոչ արծրունիս այլ արծիւ ունիս որք արծուիս առաջի նորա կրէին»: «Գիտեմ զգնունիսդ գինի ունիս որ առաջի թագաւորին պատրաստէր զբակելիսն»: Ասեմ և զսպանդունիսդ ի վերայ զնարանաց, և զհաւենունիսդ՝ բաղէակիրս... Եւ եթէ առ ցոփս ոչ ունիցիս, զձինականսդ՝ ամարայնոցաց պահակս և ձիւնակիրս» (Բ. է): Աշխարհ յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցան Աղուանք, զի ալու ձայնէին զնա» (Բ. Ը):

1. Գ. Ա. Գարագաշեան, Բնական պատմ. Հայոց Ա. եր. 251, Խառնացու բնադասարանն մէջ գտում եւ «Անգեղ տունն ոչ րե ցեղի կամ նախարարանն անուն եր, այլ Բարձր Հայք կոչուած նահանգին կամ միոյ ի զաւասաց նորա: Այսպէս կըզանենք զԱնգեղ տունն յանունն առ Բիզանդաց ևւ Ագարանցեղոսի»: Իմաստարար կարծիք յայնուոր նկարարիւն չէ կրում Ագարանցեղոս նախնոյ, րե չէ այնեղ կըզաներ հայոց «գլխաւոր նախարարներն»: «Կուսակալներն մեզ նոյն իսկ սուպերն «լիսանն Անգեղ տուն» (եր. 461), «զմեծ իշխանն Անգեղ տուն» (եր. 502), իսկ «մեսասաներոց իշխանն Արեւնաց աշխարհին»: որից պատգ երևում է որ, ինչպէս Սիւնիք, այդպէս ևւ Անգեղ տունն մրանգամայն երկրի ևւ ցեղի անուն է:

Եթէ այս բացատրութիւնների կարգին է պատկանում և Անգեղ բառի մեկնութիւնը՝ որ վասն առաւել ժահագիմութեանն ձայնէին անգեղեայ... և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տունն, այն ժամանակ անգեղեայ բառը նոյն իսկ կարող է մեր պատմագրի եթէ ոչ իւր աղբիւրի շինածը լինել:

Այսպէս ուրեմն իբրև Անգեղ Տուրքի առասպել մտնում են միայն այն երկու համառօտ պատմաւածքները թէ Տուրքը քարեր է պատառում և թէ նա նաւերի ետեից քարեր է ձգում: Պատմագիրն այս պատմաւածքները բերում է իբրև երգ եւ առասպել:

Առասպելը.— Չենք կարող ասել թէ Անգեղ Տուրքի առասպելի այս երկու հատուածը Մորենացու ստրքածն է և թէ նա ստում է՝ ներկայացնելով այդ իբրև երգ: Սուս խօսողը մի կարիք պիտի ունենայ: Իսկ մեր պատմագիրը Տուրքի առասպելը նոյն իսկ իբրև վկայութիւն չէ բերում Մար Արասի պատմութեան համար: Եւ նա կարիք էլ չունէր Տուրքի ուժեղութիւնն ապացուցանելու: Ինչպէս և բնաւ կարիք չէ զգում այդ երկու (Բ. է. Ը.) զլուխների մէջ յիշած այլ բազմութիւ նախարարութիւնների նախահայրերի այս կամ այն յատկութիւնը ժողովրդական երգով կամ առասպելով հաստատելու: Մորենացու մտածողութեան եղանակը շատ պարզ է: Սահակ Բագրատունին, ինչպէս առաջին գրքի յաւելուածից երևում է, առանձին վամք ու փափաք, «տարփանք» է ունեցել հայոց պատմութեան մէջ կարգալու պարսից առասպելներից, որ պատմագիրը, ինչպէս գիտենք, «սուտս փծուն» անյարմար բանք է անուանում: Արդ, երբ նա մի քանի զուխ յետոյ գրաւոր աղբիւրից առնելով խօսում է Անգեղ տան ծագման մասին, աւելացնում է ակնարկելով Սահակ Բագրատունու այս կամք ու փափաքին. «բայց եթէ կամիս սեւեմ և ես յաղագս նորա անյաջ և փոցուն, որպէս պարսիկք վասն Ռաստմայ Սագծկի հարիւր և քսան փոցոց ոյժ տսեն ունելը Ըանգի կարի իմն անյարմար թու էին նմա երգ բանիցն»:

1. Բարդուղիմ աւերոյ է վերջի ն յոջը, որ վկայ Ա. տեսալի մեռագիրների մէջ:

փան՝ ուժեղութեանն և սրտեայ լինելոյն որում՝ ոչ Սամսոնի և ոչ Երակեայ և որ Սաղմկին յարմարեն այս զրոյցքս: Եւ Խորենացին այնքան արհամարհում է այդ առասպելը որ չէ բուսականանում՝ «սուտ» փձուն: անյաջ, անյարմար» բառերով: ուստի և ևտեից աւելացնում է. «Ո՛հ, կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպելս: Եւ մի բույէ նոյն իսկ կարծում է թէ այդ առասպելի շափաղանցութիւնն այն աստիճանի է, որ նոյն իսկ Սահակ Բագրատունին» — որ այդպիսի առասպելներ սիրում էր, և որին մի հաճոյք պատճառելու համար միայն բերել էր այդ առասպելը — կարող է շահաւատալ, «բայց քեզ զի՛ է» քանզի էր արդարեւ սաստիկ հզօր, և այդպիսեաց զուցաց արժանի:

Կարծում ենք, մարդիկ և աւելի և և Խորենացու նման մէկը այնքան անմիտ չեն որ ընդհանրապէս փձուն առասպելներն արհամարհելով հանդերձ՝ առանց կարիքի մի փձուն առասպել սարքեն իրենցից և նոյն իսկ սարքելիս այդպիսի հսկայական կերպով ծաղրեն իրենց սարքած բանը:

Պ. Խալաթեանի (եր. 26 հտն.) առարկութիւններն այս առասպելի ժողովրդական լինելու մասին նշանակութիւն չունին բառի բուն իմաստով: Ես իւր սոյորական ձեռով Տուրքի և նորա առասպելի ծագման ժամանակագրութիւնն է քննում որի ինչարժէք ունենալը զիտենք և ապա գրում է. Տուրքի արարքներից «առաջինը իմ կարծիքով բոլորովին աննթեթ է»: որոհեաւ ըզընդամբք արծուիս և այս այդպիսիս գրելը որձաքար վեմերի վրայ ենթադրում է հսկայի մէջ որոչ աստիճանի կրթութիւն ու զարգացում (կուլտուրա), գեղարուեստների ծանօթութիւն, որ բնաւ յարմար չէ գալի Տուրքի նման հրեշաւոր ցուցանքին» (чудовнический уродь): — Անշուշտ, պ. Խալաթեանի կարծիքով մի մարդ որ «խոժոռագեղ, բարձր, կոպտատարազ, տափաքիթ, խորակն, դժնահայեաց» լինի «հրեշաւոր ցուցանք» է: Ծաշակի դէմ վիճելիք չունինք: Բայց այդպիսի մարդուն մենք, Խորենացու հետ միայն «ժահաղէմ» «Երեւնացն անպիտան» կամ տղեղ կանուանելիք: Սակայն և այնպէս ենթադրենք մի բույէ, որ այդ

մարդը «հրեշաւոր ցուցանք» է: Բայց ո՞վ աւաց, որ կրգի մէջ ևս այդ Տուրքն իրրե «հրեշաւոր ցուցանք» է ներկայանում: Մի՞թէ ինքը պ. Խալաթեանը չէ, որ մի քանի տող փրեւում գրել է. «Անգեղի մեծ ուժին Խորենացին իրենից աւելացրել է եւ անասելի հրեշաւորութիւն (уродство), Անգեղ անունը տղեղ բառով բացատրելու նպատակով»: Բայց ենթադրենք մի բույէ և այն որ կրգի մէջ ևս Տուրքը ճիշտ այնպէս է նկարագրուած, ինչպէս Խորենացին տալիս է մեզ «խոժոռագեղ, բարձր, կոպտատարազ, տափաքիթ» խորակն և դժնահայեաց» մի՞թէ այդպիսի արտաքին ունեցող մի մարդ որի նմանները կրր որտեղ և որքան ուղէք կրդանէք, անբան անասուն պիտի լինի այն աստիճանի, որ զազափար չունենայ արժիւններ և նմաններ քանդակելու մասին: Մարդ պահանջ յիշում է թէ ինչպէս հին յոյների զարմանում էին, որ այն տղեղ Սոկրատի մէջ բնակում էր ոչ միայն մեծ փիլիսոփայի այլ և քանդակագործի ոգի:

Անշուշտ այսքանով չէ սահմանափակում պ. Խալաթեանն իւր «հետազոտութիւնը»: Երգի կրկնորդ հատուածի մէջ Տուրքը «աւերական կոպիտ ոյժ է դործադրում» այսինքն թշնամիների նաւերի ետեից վեմեր է ձգում: Ուրիշ խօսքով Տուրքը մի վայրենի ու անբան է գուրս գալիս: Բայց չէ՞ որ այդ «հակասում է» առասպելի առաջին մասին (въ противность первому), որի մէջ Տուրքը այնքան զարգացած մեծ «գեղարուեստագետ» քանդակագործ է, որ վեմերի վրայ կողովներով արժիւնների պատկեր է քաշում: Ուրիշ խօսքով նոյնն է անում: ինչ որ նախապատմական ժամանակի մարդիկ էլ արել են, իրենց բնական քորայրերի պատերի վրայ թռչունների պատկեր հանելով: Եթէ պ. Խալաթեանն առաջուց միայն գրած չլինէր հրեքելու ամեն ինչ, որ Խորենացու մէջ բերած է իրրե ժողովրդական բանահիւստութիւն, նա կրտսունէր՝ այստեղ ոչ մի հակասութիւն չկայ: Այլ ընդհակառակն Տուրքը կրկու դէպքում էլ պահում է իւր բնաւորութիւնը — մի փիթխարի քարակոփ: որ կարողանում է «բուռն հարկանել զորձաքար վիճաց, ուր ոչ գոյր գեղութիւն և ձեղքել ըստ կամաց մեծ և փոքր, և քերել ըզընդամբք և կազմել որպէս տախտակ» նա անշուշտ և իւր թշնամիների ետեից՝ պիտի «անու» վեմս բլրաձեւ և ձգէ զկրիս: Ուրեմն որտեղ է հակասութիւնը:

Բայց ենթադրենք մի բույէ, որ հակա-

սութիւն կայ Այն ժամանակ հարց է արդեօք ժողովրդական առասպելի կամ երգի այս կամ այն հաստատմանն որ միջազգային հակասութիւններով կարելի է հերքել առասպելի կամ երգի գոյութիւնը: Այդ կրնանակեր ոչ մի հակացողութիւն չունենայ ժողովրդական բանահիւսութեան մասին որի մէջ յաճախ միեւնոյն անձնաւորութեանը կայուում են որոշ շերտաւորումներով զանազան պատմական շրջանների ու գաղափարների զանազան բնաւորութեան գծեր: Համեցէք օրինակներ մեր արդի կենդանի Սասնու ծախրից:

Ի՞նչպիսի հսկայ են մեր Դաւիթն ու Մհերը: Ո՞րքան պինդ ու պողպատեայ է մանուկ Դաւիթի մարմինը, որի «նո՞՞՞՞՞՞ թու՞ թիսաւ ի ջարդու քար՝ կրակ էլաւ մծախն»¹: կամ «ըղունգ առաւ քարին ու կրակ տուեց»²: Մի՞թէ դա միեւնոյն Տուրքի ձեռի ու կողմնակի պնդութիւնը չէ: Իսկ նորա ո՞յժը: Այդ մանուկ Դաւիթը «ձեռն էլձայլ զիւր շեմքով սարքեարով թաւու էկաւ»: «ձեռն էլձայլ մէկ սպնդրի (բարդի) ծառ կտակց զձէր իպի գետին»: կամ «ձեռն կտու զհոյ զարծիւցից» իրեք խարիր ձիաւոր փերիզ փահլեան սպանից»: Եւ երկաթի սուր հազած, բարդի ծառն ուսին՝ «ինչ վուտ կը զարկէր գետին գետին կրկնգէր»: Սորա ձայնից փախչում են գայլեր, արջեր, վագրներ, առիւծներ, որանց բոլորին ժողովում է ալպայ հսկան և բերում Սասուն: Եւ մի կուպով դեւեր է կտորում այն գեւերը, որոնք ուռչում են «քանց Պող բլուր» և այնպէս զիսկներից նոյն իսկ բարտի ծառն արմատահան անող և իրրե զէնք գործածող Ձենով Եգիպտոս փախչում է:—Ահա ձեզ գեռ երեխայ Դաւիթը: Բարձրութիւնն ու վե՞՞՞՞՞՞ խարութիւնն էք ուզում,—կրնա իւր հօր Սանասարի հագուստը հագին Բուսկիկ Ջարալինի վրայ է նստում, նման է «սար որ էլիւր ս սարի վրայ»:

Իսկ Մհերը այդ գեւերի ընկերը որ կր ման է գալի, ոտները թաղում են գետնի մէջ, և որի ձեռքերի տեղը մտնում է նրա քարին է զարնում:—մի՞թէ այդ Մհերը մեր Տուրքին ցեղակից չէ: Եւ գալիս է ձգլրու քաղաք, ուր «կըլնի որ խարիր քառսուն գետ իրարու կը խառնուի կըլնի մէկ գետ» (ձգլրու շատ Տրգրիս): Եկաւ Լնտիկ մէկ մեծ անազն քար էր: կցից քեղաքի քեմակ գիտու մէջ գետ էլաւ էրկու ձեռով մէկ ձեռով էն եանէն կիսայ մէկ էս էլ քեղաք չի աւրի: Բըջայ ըստըն էլ վնար էն քեարին

շինից իսկի աւերիւ զկայ էն քերդին»¹

Ահա Տուրքն ամրոջմակաւ պողպատեայ մարմնով, վի՞՞՞՞ խարի հաստով և ու՞՞՞՞ ժով և սրտեայ որ մատով որձաքարից կրակ է հանում: ձեռներով քարերը փոս է ձգում և վերցնում է կարծածից աւելի մեծ ժայռ: Մի՞թէ այդ Դաւիթն ու Մհերը այդ լեռնանման վի՞՞՞ խարիքը որոնք նոյնպէս բնութեան բիրտ ուժերի հետ գործ ունին այդ ուժերն իրրե զէնք գործադրում են և նոյն իսկ ինչպէս Մհերը բնութեան բիրտ ոյժերի անձնաւորումն են — մի՞թէ անբան անասուն են զօրաւ և «կուլտուրայի որոշ աստիճանի» և նոյն իսկ բարձր աստիճանի վրայ չեն կանգնած: Ո՞րքան մտաւոր ու բարոյական մեծութիւն ասես որ նոքա չունին: Զանձրալի շինելու համար յիշե՞՞ք որ նոքա կարողալ զիտեն այն էլ տէրտէրի կամ վարդապետի մտն են զաս առնում: Կամակ են գրում ստանում իրրոյ ու վանք, կիկղեցի են շինում: Թաշկինակ գործել տալիս և ուզածը վրան նախել տալիս մինչև անգամ «զիւրիւք բանեցնում են»:

Լեռնանման կամ ըստ Խորենացու, հարիւր քսան փղի ոյժ ունեցող Ռոստամի առաջ նոյնպէս ոչ միայն գետներ: այլ և քարը զիմանալ չէ կարողանում:

«Եթէ նա վեր ելէր մի քարի վրայ ու կանգնէր, Ծանրութիւնից երկու սորը քարի մէջը կըրտուէր: Եւ կայ Ռոստամն որ հենց ժայռի մտն էր ձգում և ընում»:

Ռոստամը անգամ սեղից պտիւտ կուտի օրերում: Եւ ահագին կորովով սար սեղից էր շարժում: Եւ մեր ամուր քար մտն էր նա կամարում իւր ընում: 2

Ի՞նչ է այս նկարագիրը և եթէ ոչ մեր Տուրքինը: Բայց այդ նոյն Ռոստամն է որ անբան անասուն չէ և ներկայանում է պարսից ժողովրդի անանգութեամբ իրրե Պարսկաստանի ժայռերի վրայ հին քանդակների սրարի: Ո՞ւմ յայտնի չեն այդ քանդակները Մուշի Ռոստամ անունով: Եւ մի՞թէ միւրիւ չհսկայ տիտան Պրոմէթէս չէ որ մըտցնում է մարդկանց մէջ ուսում գիտութիւն արուեստ և ինչ որ պիտանի է «զեղեցիկ ու կըջանի կեանքի համար»:

Բայց մենք օրինակներն աւերող ենք բազմապատկում: Եթէ այդ ամենը կարող է անել— և շատ բնականաբար— մի Ռոստամ ինչո՞ւ մի ուրիւ Ռոստամ միայն Անդեղ Տուրք անունով կարող չէ անել:

1. Մուսնիսեան, Գրոց Բրոց, կր. 151.
2. Գարեգին ու Յովսէփեան, Սասնայ ծոեր, կր. 26.

1. Մուսնայ ծոեր, կր. 146.
2. Մրդուսի, Ռոստամ և Մահար, բարզ. Գրոց պետի կր. 113, 125.

Տաւրքի առասպելի երկրորդ մասի—
 թշնամիների նաւերի ետեւից քարեր ձգելու
 նմանութիւնը Հովհաննիս Ողիտականի կիկլոպ
 Պոլիփեմի արարքին՝ արդէն վաղուց ցոյց է
 տուել Լիմփըր Բայց այդ «աշքի դարնոց նմա-
 նութիւնը» որ Լիմփըր «պատահական» է հա-
 մարելու պ. Խալաթեանը կարծում է՝ Խորե-
 նացին ինքն է «ուղղակի վերցրել որևէ
 յունական յայտնի ժողովածուից (ХОДЯЩИЙ
 СБОРНИКЪ): Իսկ պայտօյցը — միայն նման
 լինելն է: Մի երկու ասանակ տարի առաջ
 գուցէ կայելի էր այդպէս ասելու բայց այժմ
 երբ արդէն յայտնի է թէ ինչպէս ամ-
 բողջ՝ ժողովրդական երգեր, փոփոխան մեծ
 ստանաւորներ, որոնք երբեք զրուած չեն
 եղել մի ազգից միւսին, մի լեզուից միւսին են
 անցնում՝ ժողովրդի բերանին գրեթէ բառա-
 ցի ստանաւորով թարգմանուելով, միթէ կա-
 բելի չէ՞ ասել որ Ողիտականից մի քանի ազգ,
 առանց գրաստար ազրիւրի յոյներէջ իրենց գրա-
 ցի հայերին անցած լինէր: Եւ ինչու անպատ-
 ճառ յոյներէջ: Որովհետեւ արդեօք Պոլիփե-
 մի այդ հաստատար բնիկ յունական է: Չէ՞
 Ողիտականը բազմազան ազգերի առասպելնե-
 րի մի ժողովածու է: Եւ վերջապէս այդ
 «աշքի ընկնող նմանութիւնը» շատ էլ տար-
 բերութիւններ ունի փոփոխան մանրամասնե-
 րի մէջ, այնպէս որ միայն ընդհանուրի մէջ
 է մնում նմանութիւնը: Եւ պ. Խալաթեանը
 զգում է այդ ուստի և մի այսպիսի անվը-
 նաս բան է աւելացնում. «Թէ մենք այս-
 անց գրքերի (КНИЖНИЙ) ազգեցութեան հետ
 գործ ունինք, այդ երևում է դարձեալ
 (առաջինը սրն է) նորանից, որ Տաւրքի ա-
 ռասպելից առաջ եղած հաստատան ամբող-
 ջապէս վերցրած է Եւսերիտից: Յետոյ ե-
 գաւ: Որ նախորդ հաստատար Եւսերիտից է
 վերցրած, ուրեմն յաջորդն էլ մի գրքից,
 Հովհաննիսից պիտի վերցրած լինի: Եւ ինչու
 անպատճառ Հովհաննիսից և ոչ Կիրակոսից ու
 Թորոսից, և կամ ժողովրդական առասպելից:

Անգեղ աստուած:—Այսպէս, Անգեղ
 Տաւրքի առասպելը մնում է իբրև առասպել:
 Տաւրքի նման հսկաներ շատ ազգերի առաս-
 պելների մէջ կան և նոյն իսկ մեր արդի ա-
 ռասպելների մէջ: Բայց որովհետեւ Խորենա-
 ցին շատ քիչ բան է հաղորդում ուստի մենք
 չենք կարող առ այժմ գտնել այդ հսկային
 ուրիշ ազգերի հերոսների հետ համեմատել:
 Արդէն վերեւում տեսնուք նման և խիստ
 նման գծեր մեր Տաւրքի ու պարսից Ռոս-
 տամի մէջ: Բայց այդ բանական չէ Անգեղ
 Տաւրքի բնութիւնը ձիշտ որոշելու համար:

Պ. Գարագաշեան՝ զրոււմ է. «Անգեղ
 թուի լինել հին հայ գիւցազին կամ առ-
 տուածութեան անուն: Մեր նախնիք սովոր
 էին Հայոց աստուածներուն անուամբ կոչելու
 ըստ յարմարութեան օտարազգի դիւ զոր-
 օրինակ. զՕրիսն՝ Հայկի գէրեակէտ՝ Վահագն...
 այսպէս Անգեղ կրթարգմանն հին Բուշեանց
 և Սեմականաց Սերկալ կամ Էրիէլ (Հերակլ
 Հերքիւլ) աստուածը, որ կրչիշուի ի Զոր-
 բորդ դիրս թագաւորաց (Թէ. 30): Եւ այսպէս
 աւելացնում է նա. «Հաւանական է թէ
 ինչպէս Բուշեանց և Սեմականաց Սերկալը
 կամ Էրիէլն՝ նոյնպէս Հայոց Անգեղն պատե-
 րազմի ստեղծումն էր՝ անձնաւորեալ այլորա-
 նօրէն ի նսկայ անձոնի, կաշմբուն և
 աւերիչ»:

Այս ենթացում թիւնները սակայն շատ
 կասկածելի են մանաւանդ մեր հսկայի ան-
 ձոնութիւնը, քանի որ նոյն իսկ ինքը պ.
 Գարագաշեան անմիջապէս յարում է. «Խորե-
 նացին Անգեղի ահագին ուժոյն վրայ կը յա-
 շուէր նաև սոսկայի ազգութիւն, որպէս զի
 Անգեղ անունը մեկնէ ազգը նշանակութեամբ
 որ անսովոր (?) է ի մերում շեղուիս: Ու-
 թեմն սրտեղից գիտէ, որ Անգեղն անձոնի է:
 Սեմական ազգերի Սերգալը նոյնպէս ազգը և
 անձոնի չէ: Եւ արեգական բոցակէզ ջեր-
 մութեան, այլոզ ու կորստարեր տապի աս-
 տուածն է, որ «հրեղէն սուրբ ձեռին» սար-
 սափելի փայլք հազած, խողխողում և աւե-
 բում է», իբրև պատերազմի աստուած, յազ-
 թութիւն է տալի և թշնամիների երկիրը քան-
 դում: Բայց նա միանշանայն աւելի ևս մե-
 ռեքների աշխարհի վրայ իշխողն է: Սորա
 Բաթա քաղաքը յատկապէս մեռելների քա-
 ղաք է: Իբրև սանդարմետի աստուած նա
 նոյնպէս պողարբութիւն է տալի՝:

Մեր Անգեղ Տաւրքի առասպելի մէջ Սեր-
 կալի բնութեան այս գծերը չենք տեսնում:
 Բացի ուժից և թշնամիների դէմ կռուելու մի
 դէպքից: Իսկ Աստուածաշնչի թարգմանու-
 թեամբ միայն՝ Անգեղ = Սերկալ՝ դեռ չենք
 կարող հարկաւ մեր աստուածուն կամ զը-
 ցազինն նոյն բնութիւնը վերագրել ինչ որ
 ունի Սերկալը:

Մ. Արեղեան.



1. Բնական պատմ. Հայոց Ա. Կ. 250.
 2. Lehrbuch der Religionsgeschichte, herausgeg.
 von P. D. Chantepie de la Saussaye, Leipzig' 1897.
 Կ. 185.